

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽԴ. ՀԱՏՈՐԻ ԶՈՅԳ ԳԻՐՔԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ...ՊԵՅՐՈՒԹԻ

Չորեքշաբթի, 29 Յունուարի երեկոյեան ժամը 6ին Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ շնորհանդէսը *Հայկազեան հայագիտական հանդէսին*, որ 3րդ տարին է՝ լոյս կը տեսնէ երկու գիրքով:

44րդ հատորի զոյգ գիրքերուն շնորհանդէսին ներկայ էին Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի գիտաշխատողներ ղոկտներ. Նարինէ Մարգարեան եւ Սեդա Պարսամեան, Խոզեւոր, Կրթական, ակադեմական շրջանակներէ մարդիկ, գրասէր հայորդիներ: Կեդրոնական սեղանին ցուցադրուած էին *Հանդէսի* վերջին երկու տարիներու հատորները, որոնք տրամադրելի էին փափաքողներուն:



Զախէն աջ՝ ղոկտներ. Մարգարեան, Պարսամեան, Իւրնէշեան եւ Տագէսեան, վեր. ղոկտ. Փոլ Հայտոսթեան, ղոկտ. Զաւէն Մսըրլեան, հայր Ռաֆֆի Յովհաննէսեան, Ռուբինա Արթինեան եւ Յարութ Կիլիւզեան

Բացման խօսքը կատարեց ՀՀԿ խմբագրակազմի անդամ ղոկտ. Արմէն Իւրնէշեան, որ ողջունեց ներկաները, Երեւանէն ժամանած հիւրերը, նշեց թէ շնորհանդէսի այս աւանդոյթը սկսած էր 1993ին, եւ հրաւիրեց յոտնկայս յարգելու յիշատակը խմբագրակազմի անդամ, հանգուցեալ ղոկտ. Արշալոյս Թովալեանին, որ 36 տարիներ շարունակ դասաւանդած է Հայկազեան համալսարանին մէջ եւ 33 տարիներ անդամ եղած *Հանդէսի*

խմբագրակազմին: Ան ընդգծեց, թե *Հայկազեան հայագիտական հանդէսի* հատորները, համալսարանի հանրային դասախօսութեանց շարքերը, միջինարեւելեան հայօճախներու նուիրուած գիտաժողովները «'աճու փոքր եւ թուով յուժ ընդ փոքու սահմանեալ' այս համալսարանը կը դնեն հայագիտութեան զարգացման համահայկական քարտէզին վրայ»: Ապա ան մատնանշեց որ 44րդ հատորի զոյգ գիրքերու 41 յօդուածները, հրապարակուաներն ու հաղորդումները աշխատակցութիւնն են Հայաստանէն ու Սփիւռքէն գործող 34 հայ եւ ոչ-հայ հեղինակներու, եւ ամեցուց որ անոնցմով *Հանդէսը* հանրութեան մատուցած կ'ըլլայ 1189 յօդուած, հայագիտութեան 394 երախտաւորներու գիտական մահագրական՝ ամփոփուած 24948 էջերու մէջ:

Դոկտ. Մարգարեան շնորհաւորեց համալսարանը՝ «իր գիտակրթական բեղուն գործունէութեան 70 ամեակի»ն առթիւ, ընդգծելով որ այդ առումով «առանձնայատուկ ու հայութեան համար կարեւոր ուղղութիւն է ապահովում համալսարանի հայագիտական ամբիոնը որի եռանդուն ջանքերի շնորհիւ է հրատարակուում *Հայկազեան հայագիտական հանդէսը*՝ կարեւոր եւ եզակի երեւոյթ՝ Սփիւռքում,- ամեցնելով որ,- *Հանդէսը* ակադեմական կարեւոր ձեռքբերում է, որը բովանդակային ընդարձակ շրջագիծ ունի, գիտական շրջանառութեան մէջ է դնում նորանոր աղբիւրներ ու հետազօտութիւններ: Այն իր կատարած գործով նոր ուղիներ է բացում հայագիտութեան զարգացման եւ միջազգային մակարդակում հայագիտութիւնը նորովի ներկայացնելու համար: ...*Հանդէսը* համահայկական արժէք է, որի առանցքը հայագիտութիւնն է: Այն հարթակ է, որտեղ տպագրուում են վաստակ ունեցող եւ երիտասարդ սերունդներ, եւ աչքի է ընկնում գիտական ներուժի բազմակողմանի ներգրաւուածութեամբ: ...*Հանդէսն* ունի աւանդոյթներ, որոնց կողքին որդեգրուում են նաեւ նոր աւանդոյթներ: Այն մշտապէս պահում է Հայաստան-Սփիւռք կապը, որի վկայութիւնն են հայաստանեան յօդուածագիրները, *Հանդէսի* շնորհանդէսները զուգահեռաբար Հայաստանում անելու հանգամանքը»: Ապա ան շեշեց. «Այսօր գիտական հանրոյթը պէտք է առաջնորդուի հայագիտութեան զարգացման գերակայութեամբ: Հայագիտութիւնը պէտք է լինի բոլորիս ռազմավարութիւնը իր ժամանակային ու բովանդակային ողջ ընդգրկուածութեամբ: ... Գիտական հանրոյթն այս պարագայում անելիք ունի՝ նոր արհեստագիտական գործիքակազմով ներկայացնել հայկականութեանն առնչուող ցանկացած նիւթ՝ ապացուցելով վերջինիս հայկականութեան արմատները՝ թոյլ չտալով որեւէ պետութեան խեղաթիւրել պատմական փաստերը»¹:

Ապա ելլոյթ ունեցաւ *Հանդէսի* գլխաւոր խմբագիր դոկտ. Տազէսեան, որ շեշտեց թէ անցնող տարեշրջանը եղաւ «դէպքառատ, տազնապառատ ու ճգնաժամային ոչ միայն Լիբանանի ու Միջին Արեւելքի համար, այլեւ համաշխարհային հարթակին վրայ եւս: ... Յամենայնդէպս, ... *Հանդէսը* մնաց

¹ Իր խօսքը, առնչեալ նիւթերով, կու տանք *Հանդէսի* յաջորդ թիւով:

իր աշխատանքային յանձնառության վրայ, ու լաւատես ենք որ կը շարունակէ՝ այնքան ատեն որ համալսարանին պատկան մարմինները ի դէմս վեր. Հայտոսթեանին, համոզուած են տարուած աշխատանքին եւ արդիւնքին էականութեան»: Ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց «վերջին տարիներուն ... փաստի վերածուող» իրականութիւն մը՝ հայերէնախօսութեան նահանջը» եւ մտահոգութիւն յայտնեց «որ Լիբանանի երիտասարդ սերունդներուն քով հայերէնը սկսած է դառնալ նեղ, այսինքն՝ ընտանիքի, հայ միջավայրի մէջ խօսակցելու լեզու...եւ կրնանք հայերէնախօսութիւնն ալ տանուլ տալ» ու կոչ ըրաւ. «հիմա, երբ դեռ հայերէնախօսութեան թեր եւ դէմ գործօնները գրեթէ հաւասար են, կամ կարգ մը պարագաներու նոյնիսկ ինպաստ են տակաւին հայերէնախօսութեան, պարտինք ... գործնապէս ձեռնարկել ... լուրջ ծրագրեր մշակել, ելլելով մեր նախորդ փորձառութենէն...եւ գէթ խօսակցական արեւմտահայերէնը պահպանել Միջին Արեւելքի առայժմ ամենախոստմնալից հայօճախին՝ Լիբանանի մէջ»:

Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան շնորհակալութիւն յայտնեց խմբագրակազմին, անոր աշխատակիցներուն եւ շնորհանդէսի ներկաներուն, Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտէն հիւրաբար ներկայ գտնուող մասնագէտներուն ու կեդրոնացաւ Հանդէսի այս տարուան խմբագրականի նիւթին՝ արխիւ հասկացութեան վրայ:

Վեր. Հայտոսթեան տարաբնոյթ սահմանումներ կատարեց արխիւին առնչութեամբ, զայն նկատելով «տեղեկութիւն ամբարելու միջոց, ոճ եւ տեղ... հաւաքածոյ...գոյութեան իմաստաւորում... երկարամեայ կամուրջ՝ հինին եւ նորին միջեւ եւ այս իմաստով՝ թարմացում»: Ան արխիւը նկատեց «ինքնութիւնը ամրապնդող գործիք, մենք մեր արժէքը պատուելու, փոխանցելու միջոց,- ընդգծելով որ,- արխիւը անցեալի պարզը ներկայի ջանքով ապագայի վերածելու առաքելութիւն է»: Ան եզրափակեց իր խօսքը շեշտելով, որ «անարխիւ մարդն ու ժողովուրդը իրենք զիրենք մատնած կ'ըլլան անվաւեր գոյութեան»:

Աւանդական դարձած կարկանդակի հատումէն ետք, ընկերային մթնոլորտի մէջ շարունակուեցան շնորհաւորանքները, զրոյցներն ու քննարկումները:

...ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

17 Յունիսին, Հայաստանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու թանգարանին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան հայագիտական հանդէսի շնորհանդէսը, որ մաս կը կազմէր Հայկազեան համալսարանի 70ամեակին նուիրուած Հայաստանի Հանրապետութեան մէջ կայանալիք ձեռնարկներուն: Ներկայ էին Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, հոգաբարձութեան անդամներ՝ դոկտներ. Յասմիկ Պարան, Վահրամ Շէմմասեան եւ Ճոն Սաղըրեան, պատասխանատու

խմբագիր դոկտ. Անդրանիկ Տազեսեան, Հանդէսի Հայաստանի աշխատակիցներ, բարեկամներ, մշակոյթի դէմքեր, հիւրեր:



Ձախէն աջ՝ դոկտ. Վիլէն Մնացականեան, Սաղըրեան, դոկտներ. Թադէոս Տոնոյեան եւ Շէմասեան, Ալինա Տազեսեան, դոկտ. Տազեսեան, Թորոյեան, դոկտ. Հայտոսթեան, Գայիանէ Ասլանեան, դոկտ. Պարան եւ Մարալ Հայտոսթեան

Շնորհանդէսին բացումը կատարեց թանգարանի տնօրէն Լուսինէ Թորոյեանը որ գնահատեց համալսարանի մշակութային նախաձեռնութիւնները եւ օրինակ բերելով քառամեայ գործակցութիւնը՝ թանգարանին եւ համալսարանին միջեւ: Դոկտ. Տազեսեանի խօսքէն ետք դոկտ. Քնարիկ Աբրահամեան բարձրաձայնեց Հանդէսին արծարծած հայագիտական հարցերը, նորարարական ջանքերը, հայագիտութեան մէջ Հանդէսին դերը²:

Շնորհանդէսին փակումը կատարեց վեր. դոկտ. Հայտոսթեան, որ շնորհակալութիւն յայտնեց թանգարանի տնօրէնութեան, ուրախութիւն եւ գոհունակութիւն՝ Հայաստանի հայագիտական միջավայրին ու Հանդէսին միջեւ առկայ գործակցութեան, յիշեց խմբագրակազմի նորոգ հանգուցեալ դոկտ. Արշալոյս Թովալեանը, որ իր մասնագիտական կրթութիւնը ստացած էր Երեւանի պետական համալսարանին մէջ եւ անդրադարձաւ համալսարանի 70ամեակի հանդիսութեանց երեւանեան ծրագրին: Այդ առթիւ, ան յուշանուէր յանձնեց թանգարանի տնօրէնուհի Լուսինէ Թորոյեանին:

² Իր խօսքը եւս, առնչեալ նիւթերով, կու տանք Հանդէսի յաջորդ թիւով: